եթէ դուք ոչ լսէք բանից իմոց և ոչ խորհիք պարսն ձեր որում 'ի Տեառնէ արարչէն ձերմէ պարտաւորեցաք փոխանակ 'ի վեր յիշեցեալ շնորհաց, ուրեմն ըստ յայտարարութեան Տեառն ոչ երբէք երկմտիմք 'ի բանէ բերանոյ նորայ, այսինքն արիւն անմեղ մանկանց ազգին հայոց 'ի ձեռանէ ձեր խնդրել ընթերցաք, բարի ոք գիտեմ ես զի ամենայն դէտապետաք ժողովրդոց և հայրք ծնօղ որդոց և տիկինք ամուսնացեալ արանց առաւելագոյն քան զիմ 'ի միտս ձեր յիշեցուցանելն գիտեն հարկն, որ 'ի վերայ իւրեանց ձեր և մեր կայ այլ այլ է գիտելն և այլ է ջանալն և 'ի գործ մտանիլն, ուրեմն մի՛ տայք տեղի ընդունելոյ գան բազմի 'ի պատճառէ գիտելոյ ձեր զկամս Տեառն ձերոյ և ոչ առնելոյ, և արարն ձեր որում հարկաւոր է առնել մի՛ ծուլանայք, զի ոչ է ծանոր և ոչ անհնարին, ոչ ընդդէմ հաւատոյ Աստուածպաշտութեան և ոչ տոիպ վասն վայելչութեան անձանց, և ոչ աւերումն տանց և շինութեանց, և ոչ ծախ ոսկոյ և երծաթոյ և զամենայն ընչից ձերոց, եթէ ոչ բոլորովին մեղմ և դիւրին և հատուցումն պարտուց ձերոց, որում յանձն առաք, այսինքն.